

## ԿԱՐԾԻՔ

### ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ

*«ԱՆԳԼԵՐԵՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԻՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ» վերնագրով*

ատենախոսության վերաբերյալ /ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա»(անգլերեն լեզու) մասնագիտությամբ / մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Տարիներ շարունակ քերականության ուսուցումը դիտվել է որպես օտար լեզվի ուսուցման հիմնաքարն ու կարևորագույն բաղադրիչը: Մակայն նորմատիվ քերականության ուսուցումն իրականացվել է ոչ թե հաղորդակցական նպատակներով, այլ հակառակը՝ այն դարձել է հաղորդակցման յուրահատուկ խոչընդոտ: Խնդիր է առաջացել վերանայել քերականության ուսուցման նպատակներն ու խնդիրները: Մույն ատենախոսությունը նվիրված է վերոհիշյալ կարևոր հիմնախնդրին, որի հիմքում դրված է անգլերեն քերականության ուսուցման հաղորդակցական մոտեցման սկզբունքների և փոխներգործուն մեթոդների կիրառման խնդիրները և դրանց շնորհիվ Իրանի ավագ դպրոցի սովորողների քերականական կարողունակությունների զարգացման դրույթը:

Հետազոտության արդիականության, նպատակի, վարկածի և առարկայի հստակ ձևակերպումը ատենախոսին հնարավորություն է ընձեռնել ճիշտ հերթականությամբ վերհանել, քննության առնել ու բացահայտել Իրանում անգլերենի քերականության ուսուցման ավանդույթները, հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման ուղիները անգլերենի քերականության ուսուցման գործընթացում, վերձանաչողական և ճանաչողական ռազմավարությունները ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման համատեքստում:

Առաջին գլխում հեղինակը ուսումնասիրում է Իրանի ավագ դպրոցում օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները, որոնք առաջ են գալիս փոխներգործուն մեթոդներով անգլերենի ուսուցման կազմակերպման գործընթացում, մասնավորապես՝ ուսուցման

ավանդական մեթոդները, ուսուցիչների մտածողության մեջ արմատավորված կարծրատիպերը, նրանց մասնագիտական վարքագծի առանձնահատկությունները, ուսումնամեթոդական համալիրների կառուցվածքն ու բովանդակությունը: Համապատասխանաբար, առաջարկվում է այդ դժվարությունները հաղթահարելու մի քանի ուղիներ, այն է՝ դասավանդման փոխներգործուն մեթոդների ներմուծում, քերականության ուսուցման իրադրային և ինդուկտիվ մեթոդների կիրառման առաջնահերթություն:

Երկրորդ գլխում ստենախոսը փորձում է ապացուցել այն գաղափարը, որ համապատասխան ընթացակարգով իրականացվող քերականության ուսուցումը հիմք է ստեղծում օտար լեզվի հնարավորինս ազատ տիրապետման, ինչպես նաև հանրամշակութային, գործաբանական, հաղորդակցական իրազեկության զարգացման համար, քանի որ, ներկայումս, քերականության փոխներգործուն մեթոդներով ուսուցման հստակ մարտավարությունների և ռազմավարությունների անհրաժեշտության հետ մեկտեղ, մեծանում է նաև լեզվի հանրալեզվաբանական և հանրամշակութային կարողությունների դերն ու նշանակությունը:

Աշխատանքում հաշվի է առնվում նաև մի շատ կարևոր փաստ, որ հաղորդակցական մոտեցումը ենթադրում է գործառական և իրադրային հիմքի վրա հենված քերականության ուսուցման կազմակերպում, երբ քերանական երևույթներն ուսումնասիրվում և յուրացվում են ոչ թե որպես գուտ ձևական կառույցներ, այլ որպես «մտքերի, հարաբերությունների, հաղորդակցական մտադրությունների արտահայտչամիջոցներ»:

Այս տեսանկյունից իրադրային քերականական վարժությունները ուսուցման գործընթաց ներմուծելը շատ արդյունավետ է, քանի որ սովորողները դրանք կատարում են՝ հիմնվելով իրենց կենսափորձի, առօրյա կյանքի փաստերի, իրողությունների վրա: Բացի այդ, իրադրությունները կարող են ստեղծվել տարբեր աղբյուրների միջոցով՝ նկարներ, ֆիլմեր, աղյուսակներ, իրակություններ և այլն: Ստենախոսն ընդգծում է, որ իրադրային վարժությունները սովորողներին հնարավորություն են տալիս ձևավորել քերականական կառուցվածքը խոսքային գործունեության մեջ օգտագործելու կարողություն:

Երրորդ գլխում ուսումնասիրվում են Իրանի ավագ դպրոցում շրջանավոր դասագրքերը, ստուգվում և հիմնավորվում է անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Սեղմագիրը և տպագրված հոդվածները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով ատենախոսությունը՝ կցանկանայինք անել հետևյալ դիտարկումները.

1. Ատենախոսը իրավացիորեն շեշտում է, որ քերականության փոխներգործուն ուսուցումը պահանջում է հանրակրթական ավագ դպրոցի անգլերենի դասընթացում քերականական նվազագույնի ընտրության սկզբունքների հիմնովին վերանայում: Ցանկալի է, որ առանձնացվեի իր կողմից նախընտրելի և իրանական հանրակրթության տիրույթում կիրառելի սկզբունքներից մի քանիսը:
2. Աշխատանքում նշվում է, որ Իրանի հանրակրթական դպրոցում գիտնականները, մանկավարժներն ու մեթոդիստները ջանք ու եռանդ չեն խնայում փոխելու և բարելավելու օտար լեզուների դասավանդման որակը և նրանք փորձում են իրականացնել բարեփոխումներ այդ ուղղությամբ: Այս առումով, ցանկալի կլինեի նշել, թե այժմ Իրանում կրթության բարելավմանը միտված ի՞նչ ծրագրեր, փաստաթղթեր և, մասնավորապես, օտար լեզուների ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշիչների մշակման ի՞նչ հայեցակարգային դրույթներ կան:
3. Հետփորձարարական փուլում սովորողներին տրվում է ստուգողական աշխատանք՝ վեց առաջադրանքից բաղկացած, որը ավելի շատ նման է ավանդական թեստի, որի միջոցով կարելի է ստուգել քերականական նյութի պասիվ ընկալման մակարդակը: Սակայն աշխատանքը ավելի կշահեի, եթե ստուգվեր, թե սովորողները որքանով են կարողանում քերականական միավորները կիրառել հաղորդակցական և իրադրային ենթատեքստում՝ քննարկման, բանավեճի, երկխոսության, բեմականացման, հարցազրույցի, այսինքն՝ վերարտադրողական վարժությունների միջոցով:

4. Ատենախոսության մեջ առկա են որոշ տեխնիկական վրիպակներ, լեզվաոճական սխալներ:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը:

Անահիտ Մարգարի Զարգարյանի «Անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը Իրանի ավագ դպրոցում» թեկնածուական ատենախոսությունը ամբողջական է և համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ներկայացվող պահանջները, իսկ հեղինակը արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02-Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Անի Մելիքի Մանուկյան  
մ.գ.թ., դոցենտ

Անի Մանուկյանի ստորագրությունը հաստատում են

ՀՊՄՀ գիտ. քարտուղար

18.10.2023



Ա. Իսախրյան